Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Երևանի Աղասի Խանջյանի անվան հ 53 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացել է <<Երաժշտություն>> առարկայից ուսուցչի թափուր տեղ (12 դասաժամ) :

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անց է կացվում միասին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի մասին տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն(Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին, <<Երևանի Աղասի Խանջյանի անվան հ 53 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցե՝ Տիգրան Մեծի 26ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝(010)58.24.14